

ԷԶԵՐ ՀԱՅ ԾԵՔՅՈՒԹՈԳԻՑԱԽԹՅԱՆ ՊԱՏՄՈԽԹՅՈՒՆԻՑ

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ

Հարություն Սուրխաթյանի գրական հետաքրքրասիրությունները լայն էին, ոչ միայն հայ գրականությունն, այլ նաև օտար, բայ որում՝ անտիկ գրականությունից մինչև Վերածնության դարաշրջանը և ավելի ուշ՝ ժամանակների գրականությունն:

Հեղափոխությունից հետո, զիսավորապես 20-ական թվականներին, Սուրխաթյանը մեկն էր հայ խորհրդային գրականությամբ դրադվողներից, թերեւ ամենաեռանգույնը՝ Մամուլում հաճախ կարելի էր հանդիպել նրա անվանը՝ ժամանակակից գրականությանը վերաբերող հոդվածների տակ: Ստորագրությունը՝ Սուրխաթ: Միշտ վեճերի մեջ էր արդի գրականության զարգացման խնդիրների շուրջը: Նրա սուր կրտսէ համակված հոդվածները նվիրված էին արդի հեղինակներին, նրանց դնահատությանը, ինչպես նաև գրականության ընթացքին վերաբերող, այրող, ժամանակի ձևակերպումով ասած՝ հրատապ խնդիրներին²:

Եթե նկատի չունենանք Արշավիր Մելիքյանին, որ չուներ գրավոր հանդես գալու նախասիրություն, ապա Սուրխաթյանը 20-ական թվականների հայ գրական-քննադատական մտքի ամենահեղինակավոր գեմքն է, որի հոգվածները ընթերցողը սպասում էր անհամբերությամբ, իսկ այն ժամանակված գրողները, նորեկից մինչև գրական աղմուկ հանած անունները՝ մի որոշ երկուղով: Այսքանը միայն ասեմ, որ նա անզիջում էր դեպի միջակությունները, որոնք գրական շարժման ղեկավարությունը հափշտակելով՝ պիտակավորում էին տաղանդավոր հեղինակներին: Չարենցի և Բակունցի կրթութագանն էր Սուրխաթյանը: Թեև ժամանակակից, բայց լավ էր հասկանում Չարենցի պատմական գերը՝ հեղափոխությունից հետո կյանք առած գրականության, հատկապես պոեզիայի մեջ:

Քսանական թվականների վրայից եկել ու անցել են մի քանի տասնամյակ, և այժմ, երբ գրականության բազմաթիվ խնդիրներ բյուռեղացել են, հետաքրքիր է գրադիվել ու պարզել Սուրբսաթյանի իրավացիության շափը, պարզել, թե արդի գրականության ընթացքի շատ փաստերի անդրադառնալով, նա ի՞նչ շափով կարողացավ պատմության առաջ, այսօրվա առաջ, արդարացի դուրս գալ:

Այս հարցերը սպասում են իրենց ուսումնասիրողին:

Թեև ամբողջապես հայ ժամանակակից գրականությամբ ու նրա հարցերով գրադիված, Սուրբսաթյանը կարողանում է ժամանակ գտնել և մի բավական ժավալուն աշխատությամբ անդրադառնալ հին հունական գրականությանը: Հետագայում, արդեն 1935-ին, երբ ավելի պակաս շափով էր գրադիվում արդի գրականության հարցերով, գուցե նույնիսկ կարելի է ասել՝ հեռացել էր գրական քննադատության ասպարեզից, իր ողբերգական վախճանից երկու տարի առաջ հրապարակի վրա է դնում ռչումներու Շեքսպիր» գրականագիտական մեծածավալ ուսումնասիրությունը: Ոչ թե ընդարձակ տեսություն արևմտյան գրականության ընթացքի, — Հոմերոսից մինչև Շեքսպիրը, — այլ երկու, միմյանց հետ կապ չունեցող մենագրական հետազոտություններ՝ նվիրված Հոմերոսին և Շեքսպիրին՝ որոնք հեղինակը նպատակահարմար է գտել զետեղել մի գրքում:

Շեքսպիրը Սուրբսաթյանին գբաղեցրել է գրեթե մշտապես: Եվ հեղափոխությունից առաջ, և հեղափոխությունից հետո տարբեր առիթներով հոգվածներ է գրել նրա մասին: Սակայն երկու անգամ հիմնավոր կերպով է անդրադարձել անգլիական մեծ դրամատուրգին: Առաջին անգամ 1916-ին, երկրորդ անգամ՝ 1935-ին: 1916-ի աշխատությունը պարբերաբր հրապարակվել է «Մշակի» էջերում, մյուսը՝ 1935-ին առանձին գրքով լույս տեսած աշխատությունն է:

Թե ի՞նչ հարաբերության մեջ են Սուրբսաթյանի ներկայացրած երկու Շեքսպիրները, կամ ի՞նչ շափով է հիմք ընդունել առաջինը՝ երկրորդը շարադրելիս՝ առանձին ուսումնասիրության խնդիր է, որը, սակայն, գորս է այս ակնարկի նպատակներից: Այս դեպքում մեզ հետաքրքրողը «Համլետի» խնդիրն է: Երկու աշխատությունների «Համլետին» նվիրված հատվածների համեմատությունը ցույց է տալիս, որ Սուրբսաթյանը 1916-ի շարադրանքը ընդունել է որպես հիմք: Նյութը մշակելիս, ինչ-որ կողմեր բաց է թողել, ինչ-որ կողմեր ավելացրել է: Հիմնական տեսակետներից մի քանիսը մի շարադրանքից անցել են

Ճյուսը: Տեղ-տեղ շարադրանքը կրկնվում է բառացի նոր շարադրանքում պատմական միջավայրի սոցիոլոգիական բնութագրությունը ավելի լայն տեղ է զբավում: Համեմատին տրված բնորոշումը, որպես կործանման դատավարակած հասարակական ուժերի ներկայացուցիչ, մնացի է զրեթե նույնը: Շարադրանքի նմանությունն ու տարրերությունը թիրես ներկայացնում է այնպիսի հետաքրքրություն, որով խոհապես արժե զրադիկ Փետք է հուսալ, որ զրաւումնասիրովն էլ կդանվի, ինչպես նաև մի բանասեր, որ բնդհանրապես անդրադառնա Սուրխաթյանի գրական-բննադրատական ժառանգությանը:

Սուրխաթյանը, ինչպես ասվեց, երկու անգամ է անդրադառն Շեքսպիրին: Ուրեմն, երկու անգամ էլ խոսել «Համեմետի» մասին եվ աստիճանական այն զարգացումը, որ ապրել է զրականագետափ միտքը շարք երկու տասնամյակի բնթացրում, բնականաբար պայմանավորել է նաև նրա մոտեցման բնորոշումների ու զնահատությունների տարրերությունը: Գա միայն Սուրխաթյանի ապրած զարգացումը չէ: Գա այն զարգացումն է, որ ապրեց մեր զրականադիտական, ավելի ճիշտ կլինի տակ հասարակագիտական միտքը:

Եվ այդպես էլ պետք է լիներ:

Երկու շարադրանքը միմյանցից բաժանված են երկու տասնամյակներով: Բայց զրանք սովորական տասնամյակներ չեն: Նախ՝ տեղի էր ունեցել Հոկտեմբերյան հեղափոխությունը: Հետո ստեղծվեց մի նոր երկիր, նոր հասարակարգ: Մրանք վճռական ազդակներ են ժաղավորդների կյանքում և, բնականաբար, պետք է զննին իրենց ուժեղ կնիքը մարդկային բնդհանուր մտածողության վրա, անկախ նրանից, թե քննության առարկան մշակույթի ժամանակակից հարց է, թե՝ պատմական: Հեղափոխությանը հաջորդած տասնինը տարին ոչ այլ ինչ էին, բայց եթե հասարակագիտական, ուրեմն և զրականագիտական մտքի որոնումների և խմբումների տարիներ: Հասկանալի է, որ Սուրխաթյանը, որքան էլ զրականության երևոյթները ինքնուրունաբար ըմբռնող և հետազոտող, չէր կարող ապրել մտածողության բնդհանուր մինուրացից դուրս, հետևապես չէր կարող նկատի չունենալ այն խոսքը, որ շեքսպիրագիտության ասպարեզում ասվեց հեղափոխությունից հետո, գլխավորապես 20-ական թվականների երկրորդ կեսին և 30-ական թվականների սկզբներին:

Այդ ասում եմ նրա համար, որ հասկանալի լինի Սուրխաթյանի մտածողության ընդհանուր բնույթը, որպես ծնունդ մի պատմաշրջանի,

որն արդեն անցած ժամանակ է։ Պետք է նկատի ունենալ նաև այն, որ այն տարիների մտածողության ելակետները մշակվում էին ընդհանուր ջանքերով։ Թեև նկատեմ, որ հակառակ Շեքսպիրի մասին գոյություն ունեցող տիրապետող կ'ործիքի, որի ներկայացուցիչները Վ. Ֆրիչն ու Պ. Կողանն էին, նրանց հետ նաև ի. Նուսինովն ու ուրիշները, — կային և այլ կերպ մտածողներ, ինչպես, օրինակ, Ա. Լունաշարսկին։

ՇԵՔՍՊԻՐԸ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԾՆՈՒՆԴՆ Է

Այս աշխատության առաջին և, ըստ իս, ամենաուշագրավ արժանիքը պետք է համարվի այն, որ դա հայ գրականագիտության առաջին մարքսիստական խոսքն է Շեքսպիրի մասին։ Հստ որում, այդ ասելով, նկատի ունեմ ոչ 1935-ի, այլ 1916-ի «Շեքսպիրը»։ Դեռ 1916-ին Սուրբաթյանը որպես արվեստի գնահատության շափանիշ ընդունել է այն միտքը, թե «որքան մի գեղարվեստական ստեղծագործություն ինորն է իր բովանդակությամբ, այնքան էլ բարձր է նրա արժեքը հասարակական տեսակետից»¹։ Սա մի հատիկ արտահայտություն չէ, այլ գրականության և արվեստի նկատմամբ հիմնավորված ըմբռնում։ Եվ հետաքրքիրն այն է, որ այդ շաբարանքում պաշտպանվում են դրույթներ, որոնք շափականց թանկ են եղել Սուրբաթյանի համար։ «Համլետը» նաև համարում է պերճախոս ապացուց իր բազմիցս արտահայտած մտքի։ Ո՞րն է այդ միտքը։ Գեղարվեստական ստեղծագործության գնահատության շափանիշի համար չի կարող հիմք ծառայել այն, թե ինչպես է գրված, այլ ոինչը ինչպես է գրված²։ Զեապաշտական մտայնության դեմ ուղղված այս միտքը այն ժամանակներում վճռական, նույնիսկ մարտական իմաստ ուներ։

Կարեռ է և մի այլ տեսակետ, որը դարձյալ սկզբունքային նշանակություն ուներ Սուրբաթյանի համար, անկախ Շեքսպիրի կամ «Համլետի» հարցից, թեև մարքսիստական այդ դրույթը նա առաջ է քաշում և պարզաբանում այդ առնչության մեջ։

Խոսքը վերաբերում է այն հարցին, որ ամեն մի նշանավոր գեղարվեստական գործ, որքան էլ իր վրա կրի հեղինակի համակրանքն ու հակակրանքը, միևնույն է, «առարկայական օբյեկտիվ դիտողության արդյունք է»³։

Սա շատ կարեռ դրույթ է, մանավանդ որ այդ հարցի շուրջը հետագայում էլ վեճեր եղան և Սուրբաթյանի պաշտպանած տեսակետը,

ի վերջո, հազմանակեց, որպես արվեստի ստեղծագործության ճշմարտացի գնահատության ելակետ:

Վերջապես մի այլ կետ ևս, մանավանդ այն ժամանակվա համար խիստ կարենուր:

Սուրբաթյանը աշխատության առաջին տարրերակում, գրված 1916-ին, Համլետի հետեւյալ ընութափիրն է տալիս.

«Դատնության բաժակը քանից նա իր կյանքի ծանր օրերին, հիասթափեց մարդկանցից, կորցրեց հավատը մարդկության վերածնության նկատմամբ։ Հասարակական նոր-նոր բարձրացող խավերի մեջ նա չփառվ հայսի վառ շողեր, աշխարհը մանրացավ նրա աշքին, որպես մի մոռալ ժխոր, ուր օր ու դիշեր, նրա կարծիքով, գարբնվում էին մարդկության անհրաժանիկ կյանքի սպանիլ շղթաները։ Համլետը ապրեց հոգեկան կյանքի մի ծանր ողբերգություն, նրա սիրար բնկրեկվեց, հոգուտվեց, և ի վերջո ընկավ անհավասար կովի մեջաւ։»

Սուրբաթյանը այսպիսի հարց է տալիս. ինչո՞ւ պետք է Համլետը կործանիր: Եվ պատասխանում է. «Ի՞նչ կարող էր անել մի անհատ մի ամբողջ իրականության հանդեպ։ Եվ սրան հաջորդում է անհատի գերը պատմության մեջ՝ մարքսիստական դրույթի լուսարանությանը նվիրված մի հատված, որն ուղղված է անհատապաշտական մտածողության դեմ։ Կերստին գառնալով Համլետին՝ Սուրբաթյանը գրում է. «Նա պետք է ընկներ անհավասար կովի մեջ, որովհետև հասարակական շարիբների վերացումը անհատի սահմանափակ ուժերից չէ կախված»։

Սա գրված է 1916-ին, հեղափոխական խմբումների շրջանում, Հոկտեմբերյան հեղափոխությունից ուղիղ մի տարի առաջ: Եվ ահա մարքսիստ գրականագետը ընդհանուր ձեւակերպումը. «Հասարակական շարիբը կվերանա հասարակական պայքարով միայն»։ Սա արդեն գիտական դրույթ չէ միայն, այլ նաև կոչ երկրի ահեղ փորձության ժամին։

Նկատեմ, որ այս հատվածը 1935-ի գրքում չկա, և ընդհանրապես այդ հարցը չի արձարձվում Համլետի կապակցությամբ։ Սա ևս չի վկայում, արդյոք, որ դրականագետը միտուածով է առաջ քաշել հարցը՝ կամենալով հատկապես ուշադրություն հրավիրել դրա վրա։

Այստեղից էլ, ընականաբար, բխում են Սուրբաթյանի աշխատության մյուս արժանիքները։

Սիրանուշի ալբում Համլետը համամարդկային կերպար է։ Նույնը նաև Հովհաննես։ Թումանյանի տեսակետից։ Իսկ Պետրոս Աղամյանը, որ

նախորդել էր թե՛ մեկին, թե՛ մյուսին, գտնում էր, որ թեև «Համլետի» նյութը քաղված էր սկանդինավյան ասքից, բայց իրաք Շեքսպիրի գեղարվեստական ստեղծագործություն, պատմական ժամանակաշրջանի ծընունդ է: Բայց սա ընդհանուր ձեւակերպում է, մինչդեռ այդ ճիշտ սահմանումը ենթադրում և պահանջում է պատմա-հասարակական առարկայացում: Եվ դա գտնում ենք Սուրխաթյանի 1916-ի աշխատության մեջ:

Հստ Սուրխաթյանի, «Համլետը» իր վրա կրում է Շեքսպիրի ապրած ժամանակաշրջանի, պատմական դեպքերի, հասարակական իրադարձությունների խոր ազդեցությունը: Հայ իրականության մեջ թերևս առաջինը Սուրխաթյանն էր, որ տվել է «Համլետի» ստեղծման ժամանակավա պատմական բնութագիրը, գտնելով, որ դրանով, միայն դրանով, կարելի կլինի հասկանալ Շեքսպիրին, նրա ստեղծած կերպարը և ճիշտ հետևությունների հանգել:

Ի միջի ազլոց նկատեմ, որ մինչ Սուրխաթյանը նորից գրիչ կառներ անդրադառնալու Շեքսպիրին, մեղանում, հասարակագիտական մտածողության մեջ լայն ծավալ էր առել պոկրովսկիական դպրոցը, որին, ինչքան էլ տարօրինակ լինի, տուրք տվեցին շատ նշանավոր գեմքեր: 30-ական թվականներին, հատկապես 1932-ից հետո, հասարակագիտական մտածողությունը նոր շրջափուլ ոտք դրեց, փորձեց ազատագրվել գուհիկ-սոցիոլոգիական ըմբռնումներից, որոնք խանգարում էին գրականության և արվեստի երևութները ընկալել ու գնահատել կյանքի, ժամանակի ու պատմության հետ ունեցած բարդ միջնորդավորումների մեջ: Երբ Սուրխաթյանը շարադրում էր երկրորդ «Շեքսպիրը»՝ արդեն հասկանալի էր պոկրովսկիականության բացասական ազդեցությունը մեր պատմագիտության, գրականագիտության և արվեստաբանության վրա, բայց չէր կարելի ասել, որ դրանից ազատագրվել էին մարդկանց մտքերը, այդ թվում նաև Սուրխաթյանը, ուստի և նրա բնորոշումների մեջ հաճախ կարելի է հանդիպել գուհիկ-սոցիոլոգիական ձեւակերպումների: Շատ բնորոշումներ այսօր խորթ են հնչում, քանի որ կյանքի և գրականության, պատմության և արվեստի փոխհարաբերությունը այժմ չի դիտվում սոցիոլոգիական-դասակարգային պարզունակ կապակցություններով, այլ այն բարդ առնչություններով,— կրկնում եմ, միշնորդավորումներով,— որոնք և հասկանալի են դարձնում, թե ինչու մի դարաշրջանում ստեղծված ստեղծագործությունը պահպանում է գեղարվեստական նիրգործության ուժը նաև մի այլ դարաշրջանում:

«Շեքսպիրը զիտել է ֆեոդալական արիստոկրատիայի կործանման պրոցեսը, — զրում է Սուրխաթյանը, — ապրել «ասպետականության» տիտուր մայրամուտը, մի պրոցես, որը իր ոլորտառաւոյսի մեջ խորասուրդ էր անում զարերավ սրբազործված հաստրակական կյանքի ձևերը, որոնց կործանումը ավելի սուր արտահայտություն էր գտնում գրականության մեջ, քանում զրականության մեջ, քան նրան հաշորդող նորի հիմնավորումը»⁶:

Ասկելով, որ այդ պրոցեսը XVI դարիվերջի Անգլիայում ավելի խորացել էր, Սուրխաթյանը խոսում է այն մասին, թե նոր կացությունը, այսինքն Եղիսարեկիթ թագուհու մահվանից հետո, XVII դարի սկզբին, արգասիք էր այն պայքարի, որ բուրժուազիան մզում էր արիստոկրատիայի դեմ, Եվ նա ընդդում է այն արքերությունը, որ կար Եղիսարեկիթ թագուհու և նրա հաջորդի միջև Եվի վերջինիս քաղաքականության ծայրն ուզգված էր Ֆեոդալական կյանքի հիմքերը սասանող առեւտրական կապիտալի դեմ, ապա Եղիսարեկիթ թագուհին, որը նույնպես առեւտրական կապիտալը Հարկազրության և նրա արքային կազմություն էր վարում, արքունիքի նյութական և քաղաքական կշիռն ամրապնդելու և հատկապես ֆեոդալների կենտրոնականություն ձգտումները սանձելու համար, հայտնի չափով պաշտպանում էր կապիտալիզմի զարգացումը⁷:

«Պատմական այդ շրջանը, — զրում է Սուրխաթյանը, — մեծամեծ անցրերի շրջան եղավ, մի ասպարեզ սոցիալական-քաղաքական ընդհարումների, արյունային դրամաների ու սոցերգությունների, որոնք կատարվում էին սրբության վերին խավերում»⁸:

Մյուս կողմից, ըստ Սուրխաթյանի, ուստի բուրժուազիայի կուլտուրական ուժերի անընդհատ կոտտակման շրջանն էր, որն իր վառ արտահայտությունը գտավ ժամանակի փիլիսոփայության, զրականության մեջ և արվեստում, գերազանցորեն կրեց հումանիստական կնիք, ժխտեց հին, կղերական ու ֆեոդալական հեղինակությունը, ամեն ինչ ենթարկեց կասկածի, հիմնավորելով իր սկեպտիկ վերաբերմունքը անցյալի նկատմամբ⁹:

Պատմական այդ բնութագիրը տալուց հետո, Սուրխաթյանը, բնականարար, պետք է կատարեր հաջորդ քայլը և պատասխաներ այն հարցին, թե Ծեխսպիրը սոցիալական ի՞նչ համակրանքով ու հակակրանքով է գրականության մեջ մտել ու ստեղծագործել:

Սուրխաթյանն ասում է, որ նրա համակրած ու պաշտպանած միշավայրում տեղի են ունեցել պատմական անցքեր և դրանք իրենց

բնույթով ու ընթացքով հիշեցնում են Համլետին մտատանջություն պատճառած ողբերգական դեպքը:

Երկու հիշատակություն:

Ազա դրանցից մեկը:

Մարի Ստյուարտը ամուսնացած էր երկու անգամ, բայց գաղտնի հարաբերության մեջ էր մի երրորդի՝ կոմս Բոսվելի հետ: Վերջինս սպանում է նրա ամուսնուն, լորդ Դերնլիին և ամուսնանում նրա կնոջ հետ: Մարի Ստյուարտի որդին՝ Հակոբն ընկնում է նույն վիճակի մեջ, ինչ Համլետը: Սուրբիսաթյանը հիշատակում է Բրանդեսին, որի ասելով շոտլանդական ապստամբության ժամանակ գտնվել է մի դրոշակ, որի վրա նկարված է եղել Դերնլիի դիակը, կողքին ծնկաշոք Հակոբը, որ երկնքից վրեժ է պահանջում, Հակոբը օժտված է եղել Համլետին հիշեցնող գծերով. ունեցել է տատանվող բնավորություն, սիրել է բնությունն ու արվեստը, մանավանդ՝ բեմը: Դերնլիը, Հակոբի հայրը եղել է գեղեցիկ տղամարդ, մինչդեռ նրան սպանող Բոսվելը ունեցել է այլանդակ կերպարանք, ինչպես Համլետի հորեղայր Կլավդիոսը:

Մյուս պատմական անցքը կապված է կոմս Էսեքսների ընտանիքում կատարված ողբերգության հետ:

Էսեքսի (խոսքը ոչ թե գլխատված էսեքսի մասին է, այլ նրա հոր) հանկարծակի մահից հետո նրա կինն անմիջապես ամուսնանում է կոմս Լեյստերի հետ, որը սիրային կապ է ունեցել թագուհու հետ՝ գեռս վերջինիս ամուսնու ողջ ժամանակ: Նեքսպիրի օրով, ասում է Սուրբիսաթյանը, բոլորը համոզված են եղել, որ էսեքսին թունավորել է Լեյստերը: Եվ էսեքս հայրը որպես թե մահվան բոտին հայտնել է որդուն, թե ինքը մի ստոր դավի զո՞՞ս: Երիտասարդ էսեքսի հետագայում հայտնաբերված նամակներն ուսումնասիրելով պատմաբանները և շեքսպիրագետները եկել են այն եղրակացության, որ նրանց հեղինակին երկար ժամանակ մաշել է համլետական երկմտությունն ու հոռետեսությունը:

Ըստ Սուրբիսաթյանի՝ Շեքսպիրի սոցիալական համակրանքը արիստոկրատիայի կողմն է: «Մեփական աշքով նա տեսնում էր և իր ողջ էությամբ զգում, թե ինչպես սոցիալական նոր հակասությունների անողոք պայմաններում արիստոկրատիան իրար հետևից կորցնում է իր քաղաքական-տնտեսական դիրքերը, ինչպես մեկը-մյուսի հետևից կախաղան կամ բանտ են ուղարկվում նույն դասակարգի դիմադրող փայլուն դեմքերը»¹⁰:

Սուրխաթյանը մի տեղ ասում է.

«Եկբապիրը տեսնում և վերապրում էր սիրած դասակարգի քայլաբան նախանշանները»¹¹,

Մի այլ էջում գրված է.

Եկբապիրը համգացել էր, որ «նոր պայմանների մզումով անհայտանում է իր սիրած ներսուների աշխարհը»¹²:

Ինչ վերաբերումը ունի գեպի տեղի ունեցող պատմական տեղաշարժերը Եթի մի տեղ ասված է, թե տեսնելով արխառկրատիայի անկումը «համակվամ է խորին ամբությամբ»¹³, ապա մի այլ տեղ ասված է, թե այդ բոլոր անցքերը «խորապես աղղել են Եկբապիրի վրա և համակել նրան մոռայլ տրամադրությամբ», «Յոլոր լավագույն մարդիկ, — գրում է նա, — բայ բանաստեղծի, անխուսափելի անկման են դատապարտված և բոլոր գրական երեսոյթները՝ խորակման»¹⁴,

Այս ամենի ազգեցության տակ Եկբապիրի ողբերգություններում «գերակուում են երկմատությունն ու թերահավատությունը, հոգեկան ձնշումն ու հոռետեսությունը»¹⁵,

Եվ այս Սուրխաթյանի կերպափակիլ հետեւթյունը, այն ընդհանրացումը, որ պետք է լիներ նրա վերոհիշյալ դատողությունների տրամարանական վերջակեալու

«Եկբապիրը իր հերոսների գալերայով վառ պատկերում է շրջապատի սոցիալական միջավայրը, փիլիսոփայում, անդրադարձնող հարազատ դասակարգի և նին կարգերի փլուզումը՝ նամարելով անկումն ամրող աշխարհի»¹⁶:

Եվ այս բոլորից հետո, երբ Սուրխաթյանը հայտարարում է, թե «Համլետը այդ տրամադրությունների խտացած արտահայտությունն է», չպետք է զարմանը պատճառի: Համլետի կերպարը վերլուծելիս, Սուրխաթյանը նույն ըմբռնումն է զարգացնում, սակայն ինչ-որ հատվածներում մի փոքր այլ եղրակացությունների հանգելով:

ՀԱՄԼԵՏԸ ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ԱՇԽԱՄԾՆԵՐԻ ՃԱՄՓԱԲԱԺԱՆՈՒՄ

Համլետի կերպարի վերլուծության մեջ Սուրխաթյանը նույնացնում է Եկբապիրին և նրա հերոսին:

«Եկբապիրը նույն միջավայրի արգասիք է, ինչ Համլետը, — գրում է Սուրխաթյանը, — նրան հատուկ է համլետական վերաբերմունքը դեպի

արտաքին աշխարհը: Իր հոգեբանությամբ ու մտածելակերպով նա պատկանում է այն խավերին, որոնք, հասարակական նոր ուժերի ճընշման տակ, պատմական ասպարեզից հետ էին մղվում: Տիսուր ներկայի հանդեպ ասպարայի տեսնչերն ևս մարած համարելով, այդ խավերը լըքվում էին, հուսահատվում, դառնաղետ համարում մարդկային հասարակության բովանդակ կյանքը, անիմաստ ու անխորհուրդ գտնելով նրա հարատեմելու ձգուումը:

Այս նույնացումից պարզ է դառնում, որ, ըստ Սուրխաթյանի, Համբետն իր սոցիալական և գաղափարական տրամադրություններով ու ձգուումներով պատկանում է անհետացող ազնվականությանը: Սակայն հարցը պատկանելը չէ միայն, որովհետև կարելի է պատկանել, բայց հակադրվել: Սուրխաթյանի կարծիքով, Համլետն իր ամբողջ պատմությամբ, իր մտքերով ու գաղափարներով պատմական ասպարեզից գուրս մղվող ազնվականության ներկայացուցիչն է:

Գրականագիտին գրաղեցրել է մի հարց, որը մինչ այդ ոչ մի հայ շիքսպիրագետի ուշադրությանը չի արժանացել: Նրան հետաքրքրում է, թե Համլետն իր հոգեբանությամբ և մտահայեցությամբ Շեքսպիրի այլ երկերում ունի՞, արդյոք, արտացոլումներ: Եվ գտնում է, որ «ինչպես կուզեք» կատակերգության մեջ համլետյան անդրադարձումներ կան. մեկը ժակն է, մյուսը՝ դուքսը: Քաղաքական պայքարի հետևանքը հալածված ժակն ապրում է անտառում և չի կամենում վերադառնալ քաղաք, մտածելով, որ ավելի լավ է ապրել ծառերի ու կենդանիների ընկերությամբ, քանի որ «թշվառ է աշխարհը»:

Գրականագիտը համլետյան տրամադրություն է գտնում նաև Շեքսպիրի 66-րդ սոնետում: Այդտեղ, նրա կարծիքով, արտահայտված են բանաստեղծի հուսահատ մտքերն ու հուզերը:

«Համլետը, ինչպես և ինքը Շեքսպիրը, — գրում է Սուրխաթյանը, — երկու դարաշրջանների ընդհարման վկաներն ու մասնակիցներն են»¹: Նրա կարծիքով, Համլետի դասակարգը անցյալին է պատկանում, նա նաևն շօսւմ է դեպի տիրապետություն քայլող բուրժուազիայի առջև²: Ըստ Սուրխաթյանի, Համլետի կերպարը աճման երկու շրջան է ապրում. մեկը, որ շկա ողբերգության մեջ՝ պատկանում է արքայազնի վիտենքերգան տարիներին, երբ նա տոգորված է եղել ապագայի բարձրագույն երազներով և աշխարհը նրա աշքին երևացել է որպես մի շքեղ կերտվածք, — իսկ մարդն այդ աշխարհի սքանչելի պսակը³: Երկրորդ շրջանում, երբ կյանքի գեղքերը՝ հոր մահը, մոր շուտափույթ ամուս-

նությունը, կասկածը, թե հայրը սպանված է եղբոր ձեռքով՝ նրան զիմ-
դիմաց են կանգնեցնում բիբա իրականաթյան առաջ, ոնա հուսահատ-
ված է, աշխարհը նրա աշբում տառապանքի վայր է դառնում, իսկ
բնության պատկ մարդք՝ «փոշու այդ եթերային գոյացումը»՝ մի ող-
բերգական ոչնչություն։⁴

Այսպիսով, Համլիտը հուսահատի և հոսեասի մեկն է, որի աշքին
աշխարհն ու կյանքը կորցրել են իրենց հմայքը։ Գրականագեան այն
տեսակետին է, որ Համլիտի մելամաղձությունը բխում է սեփական
կամքի թուլության չափազանցված դիմակցությունից։

Այս տեսակետը նորություն չէ ոչ հայ գրականության մեջ, ոչ էլ
ընդհանրապես, բայց սա չի ներդաշնակում մեղանում տիրապեսող
զործուն Համլիտի բժբանմանը։ Արդարությունը պահանջում է ասել, որ
Սորբիաթյանի մաքերը և խորհրդածությունները Համլիտի շտրչ, բարե-
րախարար, այս կետի վրա կանգ չեն առնում և դրա հետևանքով հե-
րոսի բմբանման շրջանակը Սուրբաթյանի հետազոտության մեջ ընդ-
լայնվում է, և ավելի շահում, նրա կարծիքով, Համլիտը մի կողմից
արիստոկրատիայի ներկայացուցիչն է, բազմաթիվ եթերով և շահերով
կապված է կործանվող ազնվականության հետ, մյուս կողմից՝ նա իր
վրա կրում է Վերածնության շրջանի հումանիստական մատողության
ազդեցությունը։ Սակայն, ինչպես արդեն տեսանքը, Վերածնության շրր-
ջանի հումանիզմը, — Սուրբաթյանի մեկնությամբ, — ազնվականության,
դեմ իրեն հաստատող բորժուազիայի փիլիսոփայությունն է։ Տվյալ
դեպքում հակասությունը չէ կարեռ, այլ իմաստալին այն, մեծ հասկա-
ցողությունը, որ կապվում է Համլիտի կերպարի հետ։

Վիտենբերգում, ուր սովորել է Համլիտը, դասախնուել է Զորդանո-
Բրունոն։ Համլիտը ծանօթ է եղել Մոնտենի հումանիստական փիլիսո-
փայությանը, նրա սկեպտիցիզմին։

Սուրբաթյանի կարծիքով, Շերսպիրի վրա զորեղ ազդեցություն է-
ունեցել ժամանակի սկեպտիկ փիլիսոփայությունը, կղերա-ավատա-
կան մշակույթի հումանիստական քննադատությունը, և այդ բոլորը վառ-
արտահայտություն է գտել նրա «Համլիտում»⁶։ Շերսպիրի «Համլի-
տում» «անզրադարձել է վերածնության շրջանի բովանդակ իմաստը,
անդրադարձել երկու էպոխաների ճամփարաժանի վրա կանգնած և բար-
ձըր ինտելեկտով օժտված մարդու մտքերն ու ապրումները», ժխտում-
ներն ու ակնկալությունները⁷։

Այսպիսով, Համլետը ազատագրվել է դասակարգային պիտակավորումից, որին, նախորդ էջերում, Սուրխաթյանը բավական առատորեն տուրք է տվել:

Սուրխաթյանի աշբում, ինչպես երեսում է, ակնհայտ է Համլետի մտքերի կապը Վերածնության շրջանի հումանիստական մտածողության հետ: Այդ մասին նա խոսել է, — ճիշտ է, ավելի քիչ շափով, — բայց նաև 1916-ի շարադրանքում: Բացի այդ, նա Համլետի մեջ տեսնում է սկեպտիցիզմ, իսկ գրականագետին, որպես փիլիսոփայության պատմությանը լավ ժանոթ մարդու, հայտնի է, որ սկեպտիցիզմը այդ շրջանում առաջադիմական ուժ էր կրում իր մեջ, քանի որ զա ոչ այլ ինչ էր, բայց եթե մի եռանդուն հարձակում «եկեղեցու հեղինակության և նրա ձևակերտած բացարձակ ճշմարտությունների վրա»⁸: Սրանից էլ բխում է այն կարևոր եղրակացությունը, թե «Համլետն իր քննադատությամբ ու սկեպտիցիզմով քանդում էր միջնադարի ուսացիոն և սխոլաստիկ փիլիսոփայության շենքը»⁹: Համլետը, ըստ Սուրխաթյանի, երկու տարրեր, երկու հակագիր ժամանակների ծնունդ է. նա վերջինն է հին աշխարհում և առաջին՝ նորում: Այս միտքը, — և շատ կարևոր միտքը, — Սուրխաթյանը փոխ է առել ուրիշից և տարրեր ձեզ կերպումով կրկնում է մի քանի անգամ: Նա չի հրաժարվում իր այն մտքից, որ Համլետը «արիստոկրատ դասակարգի զավակ է»¹⁰, բայց միաժամանակ շիշտում է «նրանից խորթացած, նրան հակադրված զավակը»¹¹: Սա ճիշտ է, անշուշտ, բայց, միաժամանակ, հակասության մեջ է իր նախորդ պնդումներին, որոնց մասին խոսք եղավ սկզբում:

Այսպես դատելով, Սուրխաթյանը վեճի մեջ է մտնում պրոֆ. նուսինովի հետ, որը, նույնպես գոեհիկ-սոցիոլոգիզմի ազդեցությամբ, Համլետից պահանջում էր «պայքարել կամ հանուն ֆեոդալական հզորության, կամ հանուն՝ առևտրական բուրժուազիայի նոր իշխանության»: Սուրխաթյանը այդ տեսակետը համարում է թյուրիմացության արդյունք¹²:

Հեռանալով սկզբում արած իր պնդումներից, Սուրխաթյանը շարադրանքի վերջին էջերում խիստ էական է համարում այն, որ Համլետը շի ողբում իր դասակարգի կործանումը, ոչ էլ իդեալականացնում պատմության գիրկն անցնող անցյալը: Ընդհակառակը, Համլետը տեսնում է, թե երկիրը Կալվիտոսի թագավորության օրով դարձել է բանտ, բռնապետություն, անարդանքի և հուսահատության վայր:

Սա նշանակում է, որ Համլետը, ըստ Սուրխաթյանի, կարողանում է

մասնավոր իրովությանից ընդհանրացում կատարելու «Կատարված ոպանություններ» ու դավաճանությունը, — ասում է գրականագիտոր, — նա ազնամասնավոր փաստ չէ համարում, զրա մեջ նա տեսնում է մի ամբողջ երկույթ, մի ընդհանուր շարիթ, իր գժրախտությունը՝ մի մասնիկը՝ ընդհանուր գժրախտության, որ համատարած է բովանդակ աշխարհում¹³: Մի-երկու էջ հետինակիր կրկին անդրադառնում է նույն խնդրին և այս անդամ ասում. «Օժաված լինելով մասնավոր շարիթի հոգեր հասարակական երևոյթ տեսնելու ընդունակությամբ, Համբեար իր «Ախնել-շլինել» մենախոսության մեջ բարձրանում է մինչև սոցիալական անարդարության դիտակցությունը¹⁴: Պրոֆ. Նուսինովից բացի, նարանավեճ է մզում նաև Տորգինեի դեմ, քննադատելով վիպասանի այն միաբը, թե իրը Համբեար շափազանց հսասեր է և զրադիմ է միայն իր անձնավորությամբ։ Այդ կարծիքը համարում է հիմնովին սխալ-աեթե Համբեար, — ասում է նա, — միմիայն իր մասին խորհող լինելու, ել ինչո՞ւ պիտի աշխարհում տիրող քառսի մասին մտածեր, ինչո՞ւ սեփական գժրախտությունը առիթ տար նրան ընդհանրացումներ անելու, անդամ սոցիալական անարդարության մասին դառնությամբ խոսելու¹⁵:

Սուրբամթյանը հիշատակում է Պետրոս Աղամյանին, նրա վեճը Տուրգենևի հետ նույն հարցի շուրջ, ինչպես նաև այն խնդրի, թե Համբեար Շիկիային սիրո՞ւմ է, թե ոչ նույն դիբբերի վրա կանգնելով, Սուրբիամթյանը պաշտպանում է Համբեաին ուսւ վիպասանի միակողմանի մեկնությունից և հանգում ճիշտ եղբակացության՝ «պարտի գիտակցության առաջ նա զո՞նց իր անձնական երջանկությունը¹⁶:

Ե՞նչ է հասկանում Սուրբամթյանը՝ պարտը ասելով:

Սպանված հոր վրեժը զուծե՞լ: Այդ խնդի՞րն է, արդյոք, կանգնած Համբեարի առաջ: Դանեմարքայի թագաժառանդի սիրոր, բայց հայ գրականագիտի, լցված է վրեժինդրության զգացումով։ Նա իսկապես կամենում է ոչնչացնել ոճրագործին, բայց միաժամանակ, որպես մտածող, որպես կյանքի առանձին երևոյթներից ընդհանրացումներ կատարելու ընդունակ մարդ, հասկանում է, որ «ոճիրը գրանով շի վերջանալու»¹⁷: Համբեար սուր շարժող, նիդակ ճոճող ասպետներից չէ։ Նա մտքի մարդ է, փիլիսոփիա է, որի համար մեիփական գժրախտությունը մի պրիվմա է, որից նա նայում է «ամբողջ աշխարհի ցավերի վրա»¹⁸: Ըստ Սուրբամթյանի, Համբեար ընդունակ է վճռական բայլերի։ Երբ հարկավոր է եղել, նա տվել է զրա ապացուցները։ Նրա նպատակը «շարիքը և շարագործին ամեն կողմից մերկացնելն է»։ Համբեար ավելի խոր-

Հող է, քան գործող,— շարունակում է իր միտքը զարգացնել Սուրխաթյանը, Համլետը տեսնում էր, թե տիրող շարիքն ինչպիսի շափերի է հասնում, մինչդեռ իր ուժերը շատ են սահմանափակ դրա դիմաց¹⁹: Համլետը հասկանում է, որ «ժամանակն իր շավղից դուրս է սայթաքել», բայց նա պատրաստ չէր ժամանակն իր հունի մեջ դնելու մեծ պարտավորությունն իր վրա վերցնելու: «Ե՞թե ինքը ծնվել է նրան իր տեղը դնելու: Ոչ, պնդում է Սուրխաթյանը, այդ «կոչումը նրան չէր տրված»: Մինչդեռ շեքսպիրագիտությունը հետագայում, հատկապես մեր երկրում, ի դեմս Համլետի տեսավ ժամանակի այդ մեծ խորհուրդը իր վրա վերցրած մի խոշոր անհատի:

Ա.ՄՓՈՓՄԱՆ ՓՈԽԱՐԵՆ

Սուրխաթյանի աշխատությանը նախորդել են մի շարք դրեր, հետազոտություններ և հոգվածներ, որ հրապարակել են ոռուսական սովետական շեքսպիրագիտներն ու գրականագիտները: Դրանց մեջ առավելաշրջի ընկնողները Ֆրիչեի և Կոդանի ուսումնասիրություններն են, որ լույս են տեսել 1926¹ և 1931² թվականներին: Սուրխաթյանն ավելի մոտ է Կոդանին, քան Ֆրիչեին:

Մի զուգահեռ:

Ե՛վ Ֆրիչեի, և՛ Կոդանի աշքում Համլետը հոռետեսության մարմնացում է: Դրա պատճառը, ըստ Ֆրիչեի, այն է, որ Համլետը վերապրում է պատմության կողմից դատապարտված դասակարգի ողբերգությունը³:

Այդպես է մտածում նաև Սուրխաթյանը:

Ֆրիչեն Համլետի նախորդ է համարում ժակին և նրա հետագազարգացումը տեսնում է Թիմոն Աթենացու և Կորիոլանի մեջ⁴:

Այդ մասին ակնարկ կա նաև Սուրխաթյանի մոտ:

Ֆրիչեն և Կոդանը, ինչպես նաև Սուրխաթյանը նրանցից առաջ,— նկատի ունեմ 1916-ի գրածը,— և նրանցից հետո, Վերածնության շըրջանի հումանիստ մտածողների աղդեցությունն է նկատում Համլետի վրա: Երեքն էլ հիշատակում են Բրունոյին, Լյութերին և Մոնտենին:

Կա էական մի տարրերություն Ֆրիչեի և Սուրխաթյանի միջև: Ըստ Ֆրիչեի, Համլետը կրոնական մտածողությամբ է համակված: Ավելին. նա խոսում է այն մասին, թե Շեքսպիրի ժամանակվա Անգլիայում կա-

յին երկու դավանանք՝ բողոքական, որ պաշտոնականն էր և կաթոլիկական, որն սպզված էր պաշտոնականի դիմությունը Յարիշին, բավական հանգամանարին, այդ երկու դավանանքի տարրերության տեսակետից բնութագրում է ուրիշականի տեսարանը և Համլետի վերաբերմունքը դեպի արվականը Բողոքականությունը չար ու սատանայական է համարում ողիների հայտնվելը, իսկ կաթոլիկ հկեղեցին՝ բարու նշան Համլետը, ըստ Յարիշի, գերի է այդ երկու տեսակետներին, շարունակ տատանվում է, երկիրում է⁵:

Սուրբաթյանն անդրադառնում է Յարիշի մտքին, բայց պաշտպանում է հակառակ տեսակետը, նույնիսկ ապացույցներ բերում՝ հաստատելու համար Համլետի հակակրոն միտքը, ասելով, որ զա երբեմն աթեփեմի է հասնում:

Ե՛վ Սուրբաթյանը, և՛ Յարիշին, և՛ Կողանը,— վերջինս ավելի պակաս չափով,— Համլետի կերպարը, նրա ողբերգությունը բացատրելիս ելակետ են ունեցել հասարակագիտական պոկրովսկիական ուղղությունը, որը և նրանց խանգարել է՝ իրենց հետարքիր դիառդությունները կապակցել ինչպես պատմական, այնպես էլ տվյալ ժամանակի հետ ինչպես ցուցը շերսպիրագիտության հետազա զարգացումը, նույնիսկ Յարիշի, ինչպես և Սուրբաթյանի նման լայն զարգացում ունեցող դրականագետները կարող էին գոկհիկ-սոցիոլոգիզմին տուրք տալու պատճառով կաշկանդվել և դժվարանալ արվեստի երևույթների մեկնաբանության և զնահատության մեջ:

Սուրբաթյանի աշխատությունը լույս է տեսել 1935-ին:

Դրանից մի տարի առաջ, 1934-ին լույս էր տեսել ոռու ականավոր շեքսպիրագիտական Ա. Ա. Սմիրնովի զիրքը՝ «Շեքսպիրի ստեղծագործությունը»⁶:

Այդ երկու աշխատությունների մեջ կան ընդհանուր կողմերու Ընդհանրության ամենաէականն այն է, որ երկու հետազոտողները Համլետին համարում են երկու տարրեր գարշշանների ծնունդ:

Ի՞նչ տարրերություն կա երկու աշխատությունների միջև:

Սուրբաթյանի համեմատությամբ, Սմիրնովը մի քայլ ավելի առաջ է անում, Համլետին համարելով ոչ միայն որպես հակաֆեոդալական, այլև գեմոկրատ անձնավորություն⁷:

Մի այլ հարց էր:

Սմիրնովն էլ է Համլետին հոռետես համարում, բայց այլ որակումով, որը և հետազույմ զարգացում գտավ շեքսպիրագիտության մեջ

Նույն Շերոսին հոռետեսությունից ազատագրելու համար Համլետի հոռետեսությունը անցողիկ մի մոմենտ է, որ ընդունակ չէ դուրս մղելու Շեքսպիրի պայքարը դեռևս անորոշ, նրա անրջած իդեալների համար, նրա սերը դեպի կյանքը, որ ներքին լավատեսության հիմք է»⁸:

Սուրխաթյանի մոտ շկա այդ: Թեև նույն ժամանակների և նույն հարցերի հետազոտողներ, երկուսն էլ իրենց աշխատությունները գրել են գոեհիկ-սոցիոլոգիական ավանդների ազդեցության հաղթահարման շրջանում: Այնուամենայնիվ, և մեկի, և մյուսի հետազոտության մեջ կերպարի գնահատության եղանակը մնում է դասակարգային պիտակավորումը, որ, իհարկե, ավելի ակներև է Սուրխաթյանի գրքում:

Երկու աշխատությունն էլ մեր գրականագիտական մտքի անցման շրջանի արտահայտությունն են: Որպես այդպիսիք՝ կրում են անցման շրջանի բոլոր դժվարությունների կնիքը: Դրանք կարելոր քայլեր էին գոեհիկ-սոցիոլոգիական դատողությունների հաղթահարման ճանապարհին: Եվ նախապատրաստական քայլ այն գրականագետների համար, որոնք, լիովին ազատ լինելով պոկրովսկիական դպրոցի ազդեցությունից, Շեքսպիրի ու նրա «Համլետի» հետ կապված հարցերը քննության առան ավելի մեծ ու ավելի սերտ կապեր տեսնելով ոչ միայն Շեքսպիրի ու նրա ապրած դարաշրջանի, այլ նաև Շեքսպիրի ու մեր ժամանակների միջև, ընդգծելով նրա սերը դեպի կյանքը, մարդկայնությունը, գործունեությունը, բողոքող շունչը:

ՄԱՆՈՒԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ

1. Սուրխաթյանի գրականագիտական բազմակողմանի զարդումքի ապացուցներից մեկը նրա կազմած «Գրական գոհարներ» անթոլոգիան է, որ երկար տարիներ եղել է գրականությամբ հետաքրքրվողների սեղանի գիրքը («Գրական գոհարներ». Էպոս, քնարերգություն, գրամա, հատ. 1, Թիֆլիս, 1922, 734 էշ):

2. Սովետահայ գրականության մասին Սուրխաթյանի մտքերն ու դատողությունները ամփոփվել են նրա հետեւյալ գրքում: «Հետ-հոկտեմբերյան հայ գրականություն»: Պրոլետարական գրականություն, Պետհրատ, Երևան, 1929, 352 էշ:

3. Հին հոմական գրականություն. Դասական շրջան, Թիֆլիս, 1922, 253 էշ:

ԵՐԵՎԱՆԻ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱՍԻՆԻՆ Է

1. «Մշակ», 1916, № 101:
2. Տե՛ս նույն տեղը:
3. Տե՛ս նույն տեղը, № 102:
4. Տե՛ս նույն տեղը, № 105:
5. Տե՛ս նույն տեղը:
6. Սուրբ թաթիւն։ Հոմերոս—Ծեփապիր, Երևան, 1935։ Ընդգծումներն իմն են Ալ-Առաքեակ՝ Սուրբապիւն:
7. Նույն տեղը, էջ 434—435:
8. Նույն տեղը, էջ 435:
9. Տե՛ս նույն տեղը:
10. Նույն տեղը, էջ 436:
11. Նույն տեղը, էջ 435։ Ընդգծումն իմն է։
12. Նույն տեղը։ Ընդգծումն իմն է։
13. Նույն տեղը, էջ 436:
14. Նույն տեղը, էջ 437:
15. Նույն տեղը:
16. Նույն տեղը։ Ընդգծումն իմն է։

ՀԱՄԼԵՏԸ ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐԻ ՃԱՐԴԱՐԱՎԱՆՈՒՄ

1. Սուրբ թաթիւն, էջ 449:
2. Տե՛ս նույն տեղը:
3. Տե՛ս նույն տեղը, էջ 452:
4. Նույն տեղը, էջ 453:
5. Տե՛ս նույն տեղը:
6. Տե՛ս նույն տեղը, էջ 448:
7. Տե՛ս նույն տեղը, էջ 440:
8. Նույն տեղը, էջ 451:
9. Նույն տեղը:
10. Նույն տեղը, էջ 459:
11. Նույն տեղը:
12. Նույն տեղը, էջ 460:
13. Նույն տեղը, էջ 453:
14. Նույն տեղը, էջ 456—457:
15. Նույն տեղը, էջ 463:
16. Նույն տեղը, էջ 462:
17. Նույն տեղը, էջ 453:
18. Նույն տեղը, էջ 456:
19. Տե՛ս նույն տեղը:

ԱՐՓՈՓՄԱՆ ՓՈԽԱՐԵՆ

1. В. Фриче, Вильям Шекспир, М.—Л., 1926. *Այսուհետէ* В. Фриче:
2. П. С. Коган, Вильям Шекспир, М.—Л., 1931.
3. В. Фриче, *էջ 14;*
4. *Տի՛ս նույն տեղը*, *էջ 89;*
5. В. Фриче, *էջ 94—95;*
6. Х. А. Смирнов, Творчество Шекспира, Л., 1934.
7. *Տի՛ս նույն տեղը*, *էջ 118;*
8. *Նույն տեղը*, *էջ 119;*